

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅՑԵ՛ ք. ԿՎՊՄՆ, ՇԱՐՈՒՅՅԱՆ 20/32
2003 թ. հունվարի 1-ին
ՀՊԿՏԵՔԵՐԻ 1-ԻՅ

ԳԻՄԱՆԳԻՐ ԵՎ ԳՐԱՏԱՐԱՐՎԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ԱԲՐԱՏԱԾԻ
ՊԱՏԱՍԽԱՆԱՑՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ
000231: Թերթը տպագրվում է
«Տիգրան Մեծ» հրատարակչության
տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան,

Արշակունյաց 2: Ծավալը՝
26 տպագրական մանուկ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝
200 դրամ: Ստորագրված է
տպագրության 23.05.2014թ.:

ԵՐԵՎԱՐԹ
27 ՄԱՅԻՍԻ
2014թ
• № 11 (319)

ISSN 1829-3468
1 4 0 1 1
9 771829 346006

Ինձ կանչողն էլի Սյունյաց լեռներն են -
Իմ ականքներն ու խաղընկերներն են...
ՀԱՍՈ ՍԱԳՅԱՆ

Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ԴԵՐԵՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ.

Կյանքիս կարեւորագույն գործն ազգային-ազապագրական շարժմանը մասնակցելն էր...

Գիտական կյանք

Կապանի Դերենիկ Մարգարյանը, ում շարժերը հայրենի քաղաքում եւ նրա սահմաններից դուրս պարզապես «Դերո» են անվանում, հունիսի 6-ին բոլորում է 70-ամյակը, եւ փաստանյակների հեռավորությունից նայելով արած ու չարած գործերին՝ չնայած նրան, որ Կապանում կարողացել է ղեկավարել ու զարգացնել թեթեւ արդյունաբերության աչքի ընկնող խոշոր ձեռնարկությունը, լուրջ փնտրեւթղարողի համբավ ձեռք բերել, համարում է, որ ապրած փարիների ամենամեծ հաջողությունը հենց Շարժման փարիների իր գործունեությունն է, Սյունիքում ինքնապաշտպանության գործին բերած նպաստը:


Հայրը՝ Բագրատը, Կապանի Կեմանց (ներկայումս արդեն ամայացած) գյուղից էր, Արփենիկ մայրը՝ Սրաշենից: Դերենիկն ընտանիքի սպասված արու զավակն է եղել երեք քույրերի ծննդից հետո. 1944-ի պատերազմական դժվարին տարում ծնվել է Շիշկերտում, ուր այդ ժամանակ տեղափոխել էին իր մորը (Շիշկերտը համեմատաբար բարեկեցիկ գյուղ էր համարվում): Կապանում հայրական օջախը սկզբում ներկա Գարեգին Նժդեհի հրապարակի

տեղում է եղել. «Պետական տուն էր, ընդամենը մի սենյակ, առանց կոմունալ հարմարությունների, բնակվում էինք երեխաներով, մայրիկս, հայրիկս ու տատիկ-պապիկս: Հետո տեղափոխվեցինք 5-րդ փողոց (այժմ Մելիք-Ստեփանյան), ու մանկությունս այնտեղ է անցել»: Կապանի N1 միջնակարգ դպրոց է հաճախել: Ինչպես ինքն է հիշում, չարածների ու քանդող-պրպտող երեխան է եղել: Դպրոցում լավ է սովորել, բայց ձգտել է գերազանցիկ չլինել. այն ժամանակ տղաների համար ամոթ էր գերազանցիկ լինելը, դա միայն աղջիկներին էր սագական: «Բոլոր առարկաներն էլ հավասար սիրել ու սովորել եմ. ե՛ւ մաթեմատիկայից ու երկրաչափությունից էի լավ, ե՛ւ շատ էի սիրում գծագրությունը, նկարելը, նաեւ՝ գրականություն ու կարդալ էի սիրում, ինքս էլ բանաստեղծություններ էի գրում: Բնությունն էր ձգում. ի դեպ, դպրոցից գալուց հետո իմ պարտականությունների մեջ էր մեր ուլերն արածեցնելը, ու նրանց հետ հաճույքով էի բնության գրկում լինում»: Հետո իր իսկ արկածախնդրության պատճառով մի տարի հետ է ընկել դպրոցից. ութ տարեկան էր, երբ հոր ընկերներից մեկը հեծանիվ է նվիրում, ՇԱՐՈՒՅՅԱՆ ԿՈՒՐՅՈՒՆԸ ԷՅ 6



ՖՈՏՈՒՄ

Դերեճիկ Սարգսյանի մասին



**ՄԵՐՈՒՑԱՆ
ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ**

Գրող, հրապարակախոս,
«Անդին» ամսագրի գլխավոր
խմբագիր

Գործուղվել էի Կապան՝ հողված գրելու «Գարուն» ամսագրի համար: Հանդիպեցի Դերեճիկ Սարգսյանին, առաջին իսկ հանդիպումից դարձանք ընկերներ: Եվ այնքան սերտ ու անմիջական է եղել այդ ընկերությունը, որ թվում է, թե պատանեկության ընկերներ ենք:

Շնորհակալ եմ նրան, որ քանիցս եղա փահանվածքում, Երիցվանքում: Այնպիսի բնավորություն ուներ, որ եթե երկու ամիս Կապան չէի գնում, զանգում, մի բան էր հորինում, որ գնամ: Շնորհիվ մեր ընկերության ծանաչեցի Կապանն ու կապանցիներին, այդ հանդիպումից նաեւ էստեներ ծնվեցին Կապանի մասին: Այնպես եղավ, որ ես էլ նրան հրավիրեցի Երեւան՝ «Գարունի» խմբագրություն: Դրանից հետո Դերեճիկն անպատճառ «Գարունի» խմբագրություն պիտի մտներ՝ սիրտը լիքը, գրպանը լիքը, այդպիսի բնավորություն ուներ: Նրան ծանոթացրել եմ Վազգեն Սարգսյանի, «Գարունի» մյուս տղաների հետ: Երբեմն մի բան էր ասում, ինքն էլ ծիծաղում, այդպիսի հետաքրքիր մի բնավորություն ուներ: Այդպես սկսվեց մեր բարեկամությունը, որ տեսում է մինչեւ հիմա: Ու զարմանքով եմ լսում, որ Դերեճիկը դառնում է յոթանասուն տարեկան:

Եվ հիմա մեր անցած կյանքն աչքիս առջեւ վերակենդանանում է ասես: Հրաշալի ֆաբրիկա էր ղեկավարում՝ հազարից ավելի աշխատողով, բազմաթիվ գործուղների, մտավորականների նյութապես օգնում էր, անխտիր բոլորին, ով նեղության մեջ էր: Եթե չէի կարողանում մեկին օգտակար լինել, զանգում էի, թե Դերեճիկ Բագրատիչ, այսպիսի խնդիր կա: Երբեք չի եղել, որ չլսեր իմ խոսքը: Երբեք: Կոպիտ ասած՝ փող աշխատող էր, եւ ձեռքը բաց էր:

1989-ին միասին գնացինք Սիսյալ Նահանգներ, մի ամիս միասին անցկացրինք: Փայլուն ընկերական շրջապատ ստեղծեց: Ես ունեի նման շրջապատ, քանի որ ԱՄՆ-ում շատերը մտերիմ էին «Գարունի» հետ, բայց Դերեճիկը նոր միայն մարդկանց ծանոթանալով ընկերական մեծ շրջապատ ստեղծեց, որովհետեւ ինքը մարդամոտ էր, ինքը սիրվող տղա էր:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, եւ Կապանը ռմբակոծվեց, Դերեճիկի հետ գնացինք Ջավախք՝ զինամթերք բերելու: Իմ ծառայողական մեքենայով էինք («Գարունի» գլխավոր խմբագիրն էի), մեքենայի տակը գետնին քսելով բերում էինք այդ ամեն ինչը: Դետո բանակին պետք էր ավելի ծանր զենք, Դերեճիկն առանց ինձ մնաց Ջավախքում, ինչ որ պետք էր բերեց հասցրեց Կապան: Խոսքը ծանր տեխնիկայի մասին է: Նա հսկայական գործ արեց այդ ընթացքում, այդ ամենն իմ աչքի առաջ է: Եվ բոլորովին պատահական չէ, որ Վազգեն Սարգսյանը

նի նման չոր մարդը շատ բարձր էր գնահատում Դերեճիկին՝ նրան պարզապես անվանելով Դերո քեռի: Դերո քեռի, այս է պետք, Դերո քեռի, այն է պետք: Եվ Դերո քեռին առանց հապաղելու ամուսն էր ասվածը: Նա հարգանք ուներ նաեւ գրողական շրջապատում: Համո Սահյանի հետ մտերիմ էր, ինչքան ենք սեղան նստել վարպետի (խոսքը Սահյանի մասին է, Վ. Օ.), Սերո Խանգաղյանի, Վարդգես Պետրոսյանի հետ, բոլորի հետ նստում վեր էինք կենում: Ես ընդամենը ծանոթացրի նրանց հետ, եւ բոլորը սիրում էին Դերոյին: Դերեճիկ Սարգսյանի եւ իմ մտերմական կյանքից եւ մի կաթիլ պատմեցի ընդամենը: Ավարտելով միտքս՝ պիտի ասեմ, Դերեճիկ Սարգսյան, Դերո քան, սիրելի ընկերս, ծնունդդ շնորհավոր, երկար կյանք ունենա, տակավին գործեր ունես անելու:



ՈՒԼԱՆԴ ՂՈՆՅԱՆ

Կապանի կուսըղջկոմի
նախկին առաջին քարտուղար

1980-ականների վերջերից սկսված Արցախյան շարժման, այնուհետեւ մեզ պարտադրված պատերազմի ժամանակ, մի խոսքով մեր երկրի, մարզի համար վճռական օրերին, հանդես եկան մարդիկ, որ, կարծես, հենց այդ ժամանակաշրջանի համար էին ծնվել: Նրանցից մեկը Դերեճիկ Սարգսյանն էր, ում՝ Արցախյան պատերազմի ժամանակ սահմանների պաշտպանների օժանդակությանը ծիշտ կլինի ավելի ծավալուն անդրադառնալ:

Նրա ողջ գործունեությունն աչքիս առջեւ է՝ դպրոցից, բուհում սովորելու տարիներից մինչեւ մեր օրերը:

Նրա կազմակերպչական ունակությունները երեւան են եկել, երբ առաջին քայլերն էր աճում Ղափանի կապի հանգույցում:

Նրա հետագա գործունեությունը տրիկոտաժի ֆաբրիկայում (հետագայում՝ արտադրական միավորում) ավելի տեսանելի էր: Այն ժամանակ Ղափանի կուսըղջկոմի առաջին քարտուղարն էի: Արդարությունը պահանջում է ասել, որ երբ նա ստանձնեց տրիկոտաժի ֆաբրիկայի տնօրենի պաշտոնը, ձեռնարկության հսկա մասնաշենքը գրեթե կառուցված էր: Բայց երիտասարդ տնօրենի առջեւ քիչ խնդիրներ չծագեցին. արտադրությունը հազեցնել ժամանակակից հոսքագծերով եւ սարքավորումներով, կարդեր պատրաստել, ձեռնարկությունում ստեղծել աշխատանքի եւ կենցաղի նորմալ պայմաններ, ինչու չէ՞ նաեւ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ կոլեկտիվում: Խնդիրները շատ ու շատ էին:

Բայց հարցերի հարցն այնպիսի արտադրանք տալն էր, որ որակ ունենար եւ սպառվեր, քանի որ Խորհրդային Միության շուկան հեղեղված էր տրիկոտաժեղենով: Գիշտ է, այն ժամանակ էկոնոմիկան պլանային էր, բայց գրոհայնությամբ հարցեր չէիր կարող լուծել, թողարկածը արտադրանքը որակ ու պահանջարկ

Իմաստ



Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի կարի արտադրամասը

Կապանի տրիկոտաժի ֆաբրիկան, որ հիմա կոչվում է «Սոնապեքս» ընկերություն

Թեթև արդյունաբերությունը, հատկապես տեքստիլի և կարի արդյունաբերությունը Հայաստանի տնտեսության հիմնական և ավանդույթներով հարուստ ճյուղերից է: Դեռևս հնագույն ժամանակներում Հայաստանը հայտնի է եղել գորգագործությամբ, կաշվի մշակմամբ, մետաքսագործությամբ, ջուլհակությամբ: Չնայած ցածր արտադրողականությանը՝ առաջին անհրաժեշտության ապրանքներն աչքի էին ընկնում բարձր որակով և ունեին ձեռավորված սպառման շուկա: Դա բացատրվում էր նրանով, որ հագուստի կամ կոշիկների արտադրությունը, լինելով աշխատատեղի, քիչ էր կախված հումքի ծավալից, ջրի և էլեկտրաէներգիայի օգտագործումից, գիտական ու տեխնոլոգիական նորամուծություններից:

Ուրտի ավանդույթները Հայաստանում համակարգված շարունակություն ունեցան հատկապես խորհրդային կարգերի հաստատումից հետո, որի ընթացքում Հայաստանի տարբեր մասերում հիմնվեցին տեքստիլի և տրիկոտաժի մի շարք խոշոր գործարաններ: Թեթև արդյունա-

բերության արտադրանքը կազմում էր խորհրդային Հայաստանի տնտեսության շուրջ մեկ երրորդը, այստեղ գործում էր 132 ձեռնարկություն: Ուրտն ապահովում էր նաև ամենամեծ զբաղվածությունը՝ երկրի արդյունաբերության մեջ ներգրավված ողջ աշխատուժի մոտ 25-30%-ը: ԽՍՀՄ տնտեսության մեջ Հայաստանը տեքստիլ և տրիկոտաժ արտադրանքի խոշորագույն մատակարարներից էր:

Հետխորհրդային ժամանակահատվածում, ինչպես տնտեսության այլ ճյուղեր, Հայաստանի տեքստիլի և տրիկոտաժի արդյունաբերությունը 60-70%-ով անկում արձանագրեց: Խոշոր գործարանները, չկարողանալով ձեռք բերել հումք կամ ապահովել իրացման շուկաներ, աշխատում էին իրենց հզորությունների չնչին չափով կամ ընդհանրապես կանգ էին առել:

1990-ականների վերջից ուրտը կրկին աշխուժացավ շնորհիվ արտերկրյա պատվերների (հիմնականում տեքստիլի կարի ծառայության մատուցում), այնպես էլ սեփական արտադրանքի (հիմնականում՝ տրիկոտաժ) արտադրության աճի:

Կապանի տրիկոտաժի ֆաբ-

րիկայի ստեղծման նախապատմությունը

1970-ական թվականներին ստեղծվեց Գորիսի տրիկոտաժի արտադրական միավորման Կապանի կարի ֆաբրիկան՝ որպես մասնաճյուղ, որը գտնվում էր բժշկական ուսումնարանի նախկին շենքում՝ Թունանյան փողոցի վրա, և որտեղ աշխատում էր 110-120 հոգի: 1981թ.



Արմեն Մարգարյան, ընկերության փոստն

փետրվարի 8-ին Կապանի կարի ֆաբրիկայի արտադրամասի տնօրեն Արմեն Մարգարյանը, ում առջև խնդիր դրվեց ավարտին հասցնել Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի շենքի կառուցումը: Նախապես աշխատելով որպես Գորիսի տրիկոտաժի արտադրական միավորման մասնաճյուղ՝ մարտ-ապրիլ ամիսներից տվեց արտադրանք: Շատ կարճ ժամանակահատվածում ֆաբրիկան ընդլայնեց իր գործունեությունը և արդյունքում՝ 1981թ. սեպտեմբեր ամսին առանձնանալով Գորիսի արտադրական միավորումից՝ դարձավ Կապանի տրիկոտաժի ֆաբրիկա:

Թերեւս, այստեղ մեծ է այն ժամանակների համար նորանշանակ տնօրենի՝ Դերենիկ Մարգարյանի դերակատարումը, ով, ուսումնասիրելով խորհրդային տարբեր երկրների թեթև արդյունաբերության, մասնավորապես տրիկոտաժի արտադրության առանձնահատկությունները, ավելի նպատակահարմար գտավ առանձին

ֆաբրիկայի ստեղծումը՝ կարճ ժամանակամիջոցում այն համալրելով նորագույն ու բարձրորակ սարքավորումներով: Այդ գործում մեծ էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի և ՀԿԿ Կապանի շրջկոմի առաջին քարտուղար Ռաֆիկ Մինասյանի ներդրումն ու աջակցությունը: Քանի որ Կապանի շրջանում մեծ մասամբ զարգացել էր լեռնահանքային արդյունաբերությունը, որտեղ հիմնականում ներգրավված էին տղամարդիկ, ուստի Կապանի տրիկոտաժի՝ որպես առանձին ֆաբրիկայի ստեղծումը հույժ կարեւոր քայլ էր կանանց և աղջիկներին աշխատանքի տեղավորելու հարցում:

Վերելք

Ընտրած ճանապարհից չջեղվելու, Կապանում տնտեսությունը զարգացնելու և կանանց աշխատանքի տեղավորելու մեծագույն ցանկությունն էր, թերեւս, այն խթանիչ ուժը, որով Կապանի տրիկոտաժի ֆաբրիկան՝ Դերենիկ Մարգարյանի ղեկավարությամբ, արագ քայլերով առաջ էր շարժվում: Սկզբնական շրջանում, ըստ նախագծի, աշխատում էր 250-300 հոգի, 1982-ին աշխատողների թիվը հասավ մոտ 400-ի, իսկ 1985-86թթ.՝ 1100-ի: Չեռնարկությունն իր հզորության գագաթնակետին հասավ 1986-87թթ., երբ առանձին մասնաճյուղեր ստեղծվեցին Քաջարանում՝ մոտ 300-320, Ագարակ քաղաքում՝ 120-130 աշխատատեղով, մի քանի գյուղական համայնքներում: Եթե մասնաճյուղ լինելու ժամանակաշրջանում ֆաբրիկան ուներ միայն կարի արտադրամաս, ապա առանձնանալուց հետո ունեցավ մի շարք արտադրամասեր՝ կարի, շվեյցարական կարի, ձեւման, հարթ և կլոր գործող, թելերի վերափաթեման, փորձարարական, ներկման, շինարարական, որոնք արտադրում էին տղամարդկանց, կանանց և մանուկների համար հագուստ, ներքին սպիտակեղեն:

Առաջին հայացքից թվում էր, թե ձեռնարկությունը լուծում էր միայն կանանց աշխատատեղերով ապահովելու հարցը, բայց... Գյուղապահպանության՝ ներկայումս մեր տարածաշրջանում առաջնային համարվող հարցն ինչ-որ առումով արդիական էր նաև խորհրդային ժամանակաշրջանում: Գյուղի բնակիչներին ոչ գյուղատնտեսական սեզոնին հիմնական աշխատանքով ապահովելու և գյուղական համայնքները չամայացնելու նպատակով Շիկահողի, Վերին Խոտանանի, Եղվարդի գյուղական համայնքներում բացվեցին Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի մասնաճյուղեր, որտեղ աշխատում էր մոտ 60-90 հոգի: Շրջկոմի հանձնարարությամբ՝ աղբբեջանական գյուղ կավճուտում (նախկինում՝ Դովչուտ) նույնպես բացվեց մասնաճյուղ՝ մոտ 40 աշխատատեղով: Իր ծաղկման շրջանում Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայում, մասնաճյուղերով հանդերձ, աշխատում էր 1600-1700 հոգի, իսկ եթե հաշվի առնենք այն, որ երեխայի խնամքի արձակուրդում կար 600-700 հոգի, ապա 2000-ից ավելի աշխատող: Դերենիկ Մարգարյանի համոզմամբ՝ այն ժամանակ իր ամենամեծ գործն այն էր, որ ձգտել է հղի կանանց ընդունել աշխատանքի:

Տարեկան համախառն արտադրանքը որոշվում էր ապրանքի քանակով, լավագույն տարիներին մինչև 3.5 մլն կտոր սպիտակեղեն էին արտադրում, որից 800հազ.-1մլն՝ վերնազգեստ՝ 80-100 տեսակով, ընդ որում՝ դրա 20-30 տեսակի մոդելն ամեն տարի փոխվում էր: Մեր օրերում այնքան մեծ խնդիր դարձած իրացումն այն ժամանակ, պլանային տնտեսության պայմաններում, ավելորդ դժվարություն գրեթե չէր ստեղծում: Արտադրանքն արտահանվում էր ԽՍՀՄ 14 հանրապետություն, հումքը ներկրվում էր Բելոռուսիայից, Ռուսաստանից, Լատվիայից, Թուրքմենիստանից: Ֆաբրիկան մշտապես աշխատել է պլանային առաջադրանքի գերակատարմամբ՝ կատարելով ամենաքիչը 103%-ով, տարեկան երկու անգամ մասնակցելով Մոսկվայում կազմակերպվող տոնավաճառին: Մրցակցությանը դիմանալու համար տնօրենը մեծ նշանակություն է տվել մասնագետների վերապատրաստմանը. 100-ից ավելի կապանցի մեկնել է Մոսկվայի, Լենինգրադի տեքստիլ ինստիտուտներ՝

Հայրենի եզերք



Ֆոտոստոր

Պալատապետություն

Մեկը նրանցից, ում վաթահորեն կարելի է կոչել ազգի նվիրյալ

ՍԿԻՋԸԸ ԷՋ 7

Կարծիքով, ամենախոցելի շրջանն էր: Իսկ բուն պատերազմի ժամանակ Դերենիկ Մարգարյանը յուրահատուկ շեֆոթյուն էր ստանձնել Շահումյանի ջոկատի նկատմամբ: Այդ ջոկատի ազատամարտիկներին նա փոխանցում էր տաք հագուստ, գուլպաներ, ձեռնոցներ եւ այլ պարագաներ: Դերենիկ Մարգարյանի նկատմամբ

որոշակի «թուլություն» ուներ Սպարապետ Վազգեն Մարգարյանը, ով Դերենիկին «քեռի» էր կոչում: Հիշում են այն օրերին, երբ հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրամանով Վազգեն Մարգարյանը նշանակվել էր Սյունիքում նախագահի ներկայացուցիչ (այն ժամանակ մարզպետներ դեռ չկային), ինձ հետ զրույցում Վազգեն Մարգարյանն ասաց, որ փնտրում է մի բանիմաց խորհրդակցանի՝ տնտեսության գծով: Ես առանց հապաղելու տվեցի Դերենիկ Մարգարյանի անունը: - Պարոն Մարգարյան, ի՞նչու եք հեռու գնում, հրավիրեք Կապանի տրիկոտաժի արտադրական միավորման տնօրեն Դերենիկ Մարգարյանին: - Շնորհակալություն խորհրդիդ համար, Սերգեյ, ես այդպես էլ կանեմ: Հիշում են Դերենիկ Մարգարյանի ծննդյան օրվա մեր կերուխուսը, որ տեղի ունեցավ Դերենիկի՝ Վաչագան գյուղի

ամառանոցում: Հավաքվել էինք հին ու նոր ընկերներ, այդ թվում մարտական, տեղի եւ Շահումյանի ջոկատի ազատամարտիկներ: Վազգեն Մարգարյանը եկավ մի փոքր ուշացումով: Բայց եկավ: Անմիջապես ողջագուրվեց Դերենիկի հետ եւ... երկուսով, այդպես էլ գրկախառնված ընկան... լողավազան: Մի քիչ լողացին, ինչ-որ կատակներ արեցին: Մեր քեֆն ավելի ու ավելի թեժացավ: Դե, մրսելուց չէին վախենում, ամառ էր՝ հունիսի 5-ը: Լողավազանում Վազգեն Մարգարյանի եւ Դերենիկ Մարգարյանի համատեղ լողանալու միջադեպը ես պատահաբար չհիշեցի: Դրանով ես ուզում էի ընդգծել Սպարապետի եւ Քեռու մտերմության աստիճանը: Պատերազմի ավարտից հետո, երբ մեր երկրի տնտեսությունը քայքայման եզրին էր, այդ թվում՝ նաեւ կապը, Հայաստանի իշխանությունները նպատակահարմար գտան օգտագործելու Դերենիկ

Մարգարյանի՝ որպես կապի ինժեների կարողությունները եւ նրան նշանակեցին Հայաստանի Հանրապետության կապի փոխնախարար: Այստեղ էլ, ինչպես ամենուր, Դերենիկ Մարգարյանն աշխատեց անմնացորդ նվիրումով եւ ուժերի ներածին չափով նպաստեց մեր երկրի կապի ծառայության զարգացմանը: Եվ երբ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ազգային ժողովում տեղի ունեցավ այն ոճիւրը, որն անուղղելի ցավ պատճառեց բոլորիս, նշանակվեց նոր կառավարություն: Վարչապետի պորտֆելը վստահվեց Սպարապետի եղբորը: Նա եկավ իր թիմով: Եվ այդ թիմում տեղ չգտնվեց Դերենիկ Մարգարյանի համար: Ահա այսքանը կուզեի ասել իմ վաղեմի բարեկամի մասին, ում 70-ամյակը լրանում է հունիսի 6-ին: Շնորհավոր ծնունդդ, սիրելի եղբայր:

Այունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՅՎՈՅՄԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
(0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կառուցված են իրանքի վրա:
Լրագրերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԳ - ՕՍԼՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Սեօ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 2000, օրինակ՝ 200 հրատ: Ստորագրված է տպագրության 26.05.2014թ.: